

Հայաստան

2017 թվականին Հայաստանը մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի վերացման ուղղությամբ նվազագույն առաջընթաց է ունեցել: Չնայած մանկական աշխատանքին վերաբերող իր նոր նախաձեռնություններին, Հայաստանը նման գնահատականի է արժանացել, քանի որ շարունակում է ուժի մեջ թողնել մի օրենք, որը խոչընդոտում է մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի վերացման հարցում առաջխաղացումը: 2014 թվականին Աշխատանքային օրենսգրքի Հոդված 34-ի վերացումից ի վեր, որը մինչ այդ սահմանում էր աշխատանքի պատահական տեսչություններ կատարելու՝ կառավարության իրավասությունը, կառավարությունն աշխատանքի գործունակ տեսչություն չի ունեցել: Այդուհետ, կառավարությունը չի ունեցել աշխատանքի տեսչության գործունակ մեխանիզմ, որը կապահովեր մանկական աշխատանքի օրենքների դիտարկումը, տեսչությունն ու գործադրումը, ներառյալ չհայտարարված տեսչությունների կատարման իրավասության մեխանիզմը: Բոլոր այլ առումներով, պետությունը ջանքեր է գործադրել՝ շարունակաբար հետամուտ լինել տեսչական բարեփոխումներին, ներառյալ Առողջության տեսչության մարմնի ստեղծումը, որը, երբ սկսի գործել, կունենա մանկական աշխատանքի վտանգավոր ձևերի նկատմամբ սահմանված արգելքների գործադրումը դիտարկելու սահմանափակ իրավասություն: Այսուհանդերձ, Հայաստանում երեխաները վտանգավոր աշխատանք են կատարում գյուղատնտեսության ոլորտում: Կառավարությունը չունի նաև ջանքերի համակարգման մեխանիզմ, որը կներառեր մանկական աշխատանքի բոլոր, ներառյալ վատթարագույն ձևերը: Բացի այդ, չկան ծրագրեր, որոնք կօգնեն գյուղատնտեսական աշխատանքների ոլորտում ներգրավված երեխաներին:

Ելնելով ստացված զեկույցներից՝ առաջարկվում են ստորև ներկայացված գործողությունները, որոնք կօգնեն Հայաստանում մանկական աշխատանքի, ընդ որում դրա վատթարագույն ձևերի վերացմանը:

Ոլորտ	Առաջարկվող գործողությունը	Առաջարկվող ժամկետ(ներ)ը
Իրավական շրջանակ	Հայաստանի օրենսդրությամբ կոնկրետ կերպով սահմանել թեթև աշխատանքի այն տեսակները, որոնց կատարումը 14-15 տարեկան երեխաների կողմից ընդունելի է:	2014 – 2017
	Նպաստել աշխատանքային օրենսդրության գործադրմանը՝ օրենքով ամրագրելով ստիպողական աշխատանքի սահմանումը:	2016 – 2017
Գործադրում	Ստեղծել աշխատանքի գործունակ տեսչություն՝ ապահովելով, որ իրավական շրջանակն Առողջության տեսչության մարմնին տա մանկական աշխատանքին վերաբերող օրենքների դիտարկման, տեսչության ու գործադրման հստակ իրավասություն: Ապահովել, որ Առողջության տեսչության մարմնի իրավասությունը ներառի որևէ տեսչություններ կատարելու կարողությունը, ընդ որում՝ թիրախավորված, բողոքի վրա հիմնված և չհայտարարված տեսչությունները, և որ տեսչությունների, խախտումների և տուգանքների քանակի ու տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը հանրությանը հասանելի լինի:	2017

ԱՄՆ Աշխատանքի նախարարության Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին 2017 թ. Զեկույցի Հայաստանի բաժին

Ոլորտ	Առաջարկվող գործողությունը	Առաջարկվող ժամկետ(ներ)ը
	Առողջության տեսչության մարմնի ֆինանսավորման մասին տեղեկատվությունը հանրությանը հասանելի դարձնել:	2017
	Ամրապնդել աշխատանքի տեսչությունը՝ ավելացնելով աշխատանքի տեսուչների թիվը՝ այն Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) տեխնիկական խորհրդի չափանիշներին համապատասխանեցնելու համար, և ապահովել, որ աշխատանքի տեսուչները լինեն քաղաքացիական ծառայողներ, այլ ոչ պայմանագրային աշխատողներ:	2017
	Պաշտպանել երեխաներին՝ իրավապահ մարմինների աշխատակիցներին տրամադրելով հանցագործության փոքրահասակ գոհերի հետ հարցազրույց անցկացնելու կարողության մասնագիտացված ուսումնավարժանք և ապահովելով, որ հետաքննություն իրականացնելիս իրավապահ մարմինների աշխատակիցներն իրենց աշխատանքը համակարգեն սոցիալական ծառայության մատակարարների հետ:	2014 – 2017
	Իրագործել ու պատշաճ կերպով ֆինանսավորել քրեական վարույթներում տուժող-վկայի պաշտպանության մեխանիզմ:	2011 – 2017
Համակարգում	Ստեղծել մանկական աշխատանքի, ընդ որում՝ դրա բոլոր վատթարագույն ձևերի դեմ պայքարի համակարգման մեխանիզմներ:	2009 – 2017
Պետական քաղաքականություն	Մանկական աշխատանքի վերացման ու կանխարգելման ռազմավարություններն ինտեգրացնել ազգային քաղաքականությունների մեջ, ներառյալ UNDAF-ի Հայաստանի ծրագիրը:	2011 – 2017
	Ապահովել, որ Մարդկային թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիրը բավարար վերահսկողություն ու ֆինանսավորում ունենա արդյունավետ կենսագործման համար:	2017
	Քայլեր ձեռնարկել Երեխաների նկատմամբ բռնության դեմ պայքարի հայացակարգի կենսագործման ուղղությամբ:	2016 – 2017
Սոցիալական ծրագրեր	Ապահովել, որ բոլոր երեխաները, ներառյալ ցածր եկամուտ ունեցող ընտանիքների երեխաներն ու էթնիկական փոքրամասնություն հանդիսացող երեխաներն ունենան կրթության հավասար հասանելիություն:	2010 – 2017
	Ավելացնել ջանքերը երեխաների ազատագրվումը կանխարգելելու, և ապահովել պետական հաստատություններում ներկայիս գտնվող երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը:	2015 – 2017
	Ապահովել հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների և հաշմանդամություն ունեցող երեխաների համար սովորական կրթության հասանելիությունը՝ բարելավելով ֆիզիկական ենթակառուցվածքի	2014 – 2017

ԱՄՆ Աշխատանքի նախարարության Մանկական աշխատանքի
 վատթարագույն ձևերի մասին 2017 թ. Ջեկույցի Հայաստանի բաժին

Ոլորտ	Առաջարկվող գործողությունը	Առաջարկվող ժամկետ(ներ)ը
	հասանելիությունը, ընդլայնելով համայնքային օժանդակ ծառայություններն ու թույլ չտալ, որ հաշմանդամության վերաբերյալ սոցիալական նախապաշարումները խոչընդոտեն երեխաների դպրոց հաճախելուն: Իրականացնել փողոցային աշխատանքում ու գյուղատնտեսության մեջ մանկական աշխատանքի խնդիրներին վերաբերող ծրագրեր:	2009 – 2017